## 27 (182). ՋԸՌՋԸԼԻ ՎԱՆՔ[1]

Յովան Օձնեցին արաբներու հետ հալածանք կը հանե ուռում-ներու[2] դեմ։ Ուռումներ ուրանց ունեցած-չունեցած կր թաղին գետնի տակ, մըջ եկեղեցիներուն ու մուղարեներում, կր փախնին։ Մեկ շատ զոր ու զորնդեղ ուռում՝ կովի կը բռվի Օմար ու Ալի[3] խալիֆներու հետ, ըդոց կը փախցու, գիկա հասնի խութա Ջըռջըլի վանք։ Ուռում ղզնջիլ կը թալե, կը շալկե ըվանք ու վանքի մեջ պալարված արաբ-ներուն, օր տանե, էդ վախտ շըսե՝ «Ա՛ստված, ընձի օգնութեն հասիx», հուս կը դնե ուր վրեն, կըսե՝ «Ի՛մ ուժ, ընձի օգնութեն հասիx», էլ չը կռնա զվանք շալկե տանե, քաշելուց՝ վանք կը ծռվի, անում կը մնա Ջըռջըլի վանք։

---

[1] Ինք ընկած, ծռած վանք (Ս. Ի.)։

[2] Հույների (Ս. Ի.)։

[3] Այս խալիֆաները ժամանակակից չեն Հովհան Օձնեցուն (Ս. Ի.)։